նեաց գովութեամբ ամուր վայրացն, և ձգին յԵգեբաց կողմանց ցԵրասխ առ Կաղզուանաւ, ոստս ընդ արևմուտս արձակեալ. 'ի հիւսիսակողմանն ամբառնան Արնէոյ լերինք, և կից նոցին ըստ հարաւոյ Եալուճամ, Քանու կամ Գանու լերինք 8000′. և ըստ սոցանէ Սողանլու լերինք մինչև յԵրասխ ընդ մէջ Բաստենոյ և Ղարսայ. ընդ սոսա անցանէ Ճանապարհ կարաւանին Կարնոյ և Կարուց յ'7880′ բարձու. 'ի մոկոյ սորա ձգի ոստ լերանց Ա+-Մէրէ և Գիրէձի որ և Գարիա-Պաղար 'ի կողմանս Կարնոյ: — Լէրին+ Կարնոյ 'ի մոկոյ կան սոցա, յելից քաղաքին՝ Տէվէ-պոյն 6600′, և այլ լեռնաբլուրք. այլ 'ի հիւսիսակողմանն ամբառնան բարձրադոյն կատարք, եփրատաբուխքն Կոպոյ լեառն (Կէօքսաղ) 10000′ և Տուն 9000′, և Սիկի+? 9800, որք խառնին յԵփրատական լերինս (8): Իսկ յելից կուսէ Տայոց ձգի ոստ Զուարր լերանց:

6. Գ. Լերինք ՎԱՌՈՑՈՏ. յայս անուն կոչեմք զաղնաղնս լերանց որ ընդ մէջ Խրամ գետոյ և Արարատեան դաշտին, 'ի նահանգին Գուգարաց և 'ի հիւսիսի Այրարատայ, յորում Վիրք և Հայք խառն բնակէին. հիւսիսագոյն ոստ լերանցս է առ Կուրաս՝ Քոփան լերինք յԱղվոր վիճակի, և կից նմին յելից հարաւոյ Պոփուլան լերինք, և սմա՝ Թառնոյ լերինք և Կանգառ, որ են ըստ արդեացս Ապոյ կամ Քայքուի լերինք. և Պեղոգոպալ և Բամբիի լերինք բարձունք և մեծատարածք, ընդ որս անցանէ Ճանապարհն Երևանայ 'ի բարձրութեան 7340′ և 6270′. յորոց և Պուռչալու (Զորոյ) գետ իջեալ ընդ հիւսիս խառնի 'ի Կուր, Թողեալ յահեկէ զՄուրայա կամ Խառուլերինս, զԼիօ+ և զԼիաւոր պղնձահան լերինս, ընդ որս անցանէ Ճանապարհն Տփխեաց յԱղուլիսոյ+ տեղւոջ բարձու 5460′. իսկ յայմմէ ընդ մէջ Աղստեւ գետոյ՝ զՁաբրը և Զարգանը, որոց ըստ ելից լեռնակքն Գարդին և Գոգ (յիշատակեալն 'ի Շարականի) որ այժմ կոչի. և Իլի-Մէյդան լերինք որ 'ի հիւսիսոյ ծովուն Գեղամայ, ընդ սա ևս անցանէ Ճանապարհ յԵրևան և տանի 'ի Կուր. և Մայմէ? 'ի մոկոյ նորա 7355′: — Այսր պարու ոստս անջատս համարելի է զԱրարատեան լերինսն որ յահեակ կուսէ Երասխայ և Ախուրեան գետոց, յորս բարձրն Արագած աւելի քան զ'13000′ 'ի հիւսիսոյ կողմանէ բլրովք յարի 'ի Բամբակ, յայլոց կողմանց չարաձգ ոստս. յելից նորա կայ Արայի լեառն (Գառնը-Եարբը) 7913′. և 'ի սորա ելից Սուպհլին որ կցի յԻշխկ-մէյտան:

7. Դ Պար կամ աղնաղակոյտ լերանց տարածեալ ընդ լայն և ընդ երկայն՝ ընդ մէջ գետոցն Աղստեւոյ և Հրազդանայ, 'ի կողմանց երրորդի պարուն ցգեան Երասխ ընդ հարաւ արևելից 'ի կողմանս Գարապաղու, և յելից կուսէ 'ի կողմանց Գանձակայ ցնոյն Երասխ 'ի սահմանս Դաշտին Շարուրայ և Նախիջևանայ. զայս պար յանուն ԳԱՐԱՊԱՂՈՒ 'ի դէպ է կոչել. զի անդ է կենդրոն և բազմակոհակ կոյտքն լերանց, կամ թէ Կովաս հայոց. զի բովանդակ երկիրն այն բարձրաւանդակ որ յեզերսն բարձր է 2–3000′, 'ի հիւսիսի և 'ի միջակողմն 6–8000′, և տարածութեամբ ընդարձակ իբրև 9000 մղոն քառ., հուսկ առ հուսկ ոստովք և բազկաք հերձեալ 'ի գագաթունս ժայռաւորս, յերկայն լեառնադաշտս և 'ի խորահովիտս անձուկս, չունելով դաշտագետինս տարածեալս, գրաւեալ գրեա եթէ զողջոյն նահանգն Սիւնեաց և զԱրցախս, որոյ ամուրքք լերանց յառակս իսկ Ճանաչէին 'ի հնումն: Արևմտեան հիւսիսակողմն հայկական կովկասուս պարագրէ զծոմն Գեղամայ 'ի բարձու 6000′ որպէս բաժակ իւրոց հրաշունչ գագաթանց. յորոյ մոկոյ կան Լէրինսն Գեղամայ, Գեղայ լեառն (Աք-տաղ) 11480′, Ահմանան 11168′, Պուլ-պաղ 10728′. 'ի մոկոյ Ահմանկանայ Քէօնանի կամ Գիանդան-պաղ 7111′, և ընդ նովաւ Հապիս որ և Շամիրամայ լեառն. 'ի հարաւակողմն Գեղայ և ծովուն՝ Աբասաղան, Ադիսլ-Աւար կամ Աբդլայ-Սար 8596′. Գարնլուի 10430′. իսկ յարևելեան եզերս ծովուն, 'ի հարաւոյ ընդ հիւսիս գնալով, կարկառին լերինքն Ա+-փայա, Քի+ի-դրա-պաղ, Գարա-աղաճ, Սապան-աղաճ, Շահ-պաղ, և յարին յԻշխկմէյտան, տարածանելով բազուկս ընդ արևելս ցՈւտի աշխարհ. և են 'ի նոսա նշանաւոր լերինք Մրդուղ, Խամլը+, Մին, Գուլլաճ (Թեբևս Կայծոյ-Ծուռ նախնեաց). 'ի հարաւոյ սոցա յարևմտեան սահմանս նահանգին Գանձակայ՝ Խուրա (Թուի Խաչեքար) և Սարեալ լերինք. յորոյ հարաւոյ Մուղ կամ Մուրվ 11540′. 'ի հարաւոյ մոկոյ Խոշնարայ 'ի Սոնթք գաւառի կից արևելեան լերանց Գեղամայ՝ Քանու-ր բարձր 10300′ (կամ Գանդուր) յորմէ Թեւ մի ձգի ընդ Մ. Հար. Մ. 'ի կողմն Շարուրայ. և 'ի միջավայրս Թեւոյն 'ի հարաւոյ կուսէ ծովուն Գեղամայ են Աւանէօլ, Դալ-Բիլլաճան կամ Տի+-Բիլլաճան 10900′. Կի-ղէլաբերդ 11060′. Քուլիան, Տաքիվան, Մուրալ: Ի հարաւոյ սոցա 'ի Զանկիզոր գաւառի Գարապաղու, Ուլուխանլու, Սըրալը, Տէվէնէօղ, Գըղըլաղաղ, Մաքանալ, Գիղըլբէգէ, Գիլանլի 9740′, Ըլգիլը, և այլն, որոց ոստք տարածին ընդ մէջ գետոցն Որոտան (Պարկուշատայ) և Հաքարու: Յելից սոցա ամբառնան լերինք բուն Արցախոյ կամ Խաչենոյ 'ի միջակողմն որ և Կիւլիստան. յորս Գըրա-կէօլ լեառն 8770′ բարձր՝ բղխէ զգետն Խաչենոյ. և Ճարաբերդ և Դիզապայա ցԵրասխ գետ, յորս գլխաւոր Զիրգիր-պաղ: Իսկ 'ի մոկոյ Պարկուշատայ ձգին Լէրին+ Գարուայ որ են պարակիցք Քունկուրայ և արևելեան լերանց Գեղամայ և կոչին Աւանէօղ, յորոց մի է և Տէվէկէօղն վերոյիշեալ, և այլք ըստ հարաւոյ նորուն, Քըսար, Տէլի+-Թէքէ 8042′. Քէպէրլի, Ահար, Արաքի, և այլն. Խաղանիլ լերինք բազմոստեայք 'ի հարաւակողմն 'ի Մեղրի գաւառի, և 'ի հարաւոյ նոցա Աւանէլ լերինք ցԵրասխ: Ըստ մոկոյ սոցա յՈրդուսատ գաւառի (Գողթան) ամբառնայ Եբլանլը լեառն. 'ի հիւսիսոյ նորա յԵրընջակ կապուտճի լեառն (կամ Գաբուտաղ) բարձր 12055′. և 'ի հիւսիսոյ ելից նորա ընդ մէջ Նախիջևանայ և Շարուրայ Քէօղի-պաղ 9660′: Հանդերձ սոքիմբք բազում և այլ անջատ և կարճատարած լերինք 'ի լայնատիւռ կուտակիս, յորում Թև մի գրեաթէ ողնայարեալ յԵրասխայ ցՔուռնկուր և անտի ցԻշխկմէյտան, կցի ընդ նախագրեալ Գի պարուն ընդ Բամբակայ և Պեղոպալայ, և Աւանիսան լերամբ բարձու 9400′՝ ընդ Ապոցայ և Թառեղայ, և նոքիմբք Պաքուլանայ և Քոտիանայ ցկուր, և յայնկոյս նորա ընդ